ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№__4745-Ա___ « 06 » դեկտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, Ն.ՉԱՐԲԱԽ 3-ՐԴ ՓՈՂՈՑ Հ.19/2 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՐԻՆԵ ՊԵՏԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մարինե Պետիկի Գալստյանի (ծնված 13.02.1963թ.) դիմումը:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 21.11.2023թ. հ.ԱՏ-21112023-01-1047 տեղեկանքը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 18.12.2023թ. հ.Հ-16031 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 22.10.2024թ. հ.20-Ել-Դ-137092-23 եզրակացությունը, համաձայն որի ք.Երևան, Շենգավիթ, Ն.Չարբախ 3-րդ փողոց հ.19/2 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ.

1.Վերականգնել ք.Երևան, Շենգավիթ, Ն.Չարբախ 3-րդ փողոց հ.19/2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Մարինե Պետիկի Գալստյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 106.63քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 106.63քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Երևան, Շենգավիթ, Ն.Չարբախ 3-րդ փողոց հ.19 հասցեի բնակելի տանը տրամադրել «Շենգավիթ, Ն.Չարբախ 3-րդ փողոց հ.19/2 տուն» հասցեն:

4. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի

N 204-Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան, Շենգավիթ, Ն.Չարբախ 3-րդ փողոց հ.19/2 հասցեում գտնվող 106.63քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ